Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիսի 5-ի N 1/14-2/10031-18, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 4-ի N 3/3-8/29475-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի հունիսի 6-ի N 02/14/56803-18 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի հունիսի 4-ի N 03/07-1/6087-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Բարեգործական որակել Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոստոմի 29/164, ՀՎՀՀ՝ 02537635) իրականացվող՝ 92,997,859.80 դրամ ընդհանուր արժողությամբ «Մեկ երեխա - մեկ համակարգիչ» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից ազատ տնտեսական գոտում գործող «Թեքնոլոջի ընդ սայնս դայնամիքս» ՍՊԸ-ից (ՀՎՀՀ՝ 02622247) ձեռք բերված «ԱրմԹաք» դյուրակիր համակարգիչները (722 հատ՝ 92,997,859.80 դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:
3. Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնելու և անհրաժեշտություններ ծրագրի կատարման մասին:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության վարչապետի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից գործարկի տնօրեն՝ Գոռ Գասպարյան

«29» մայիսի 2018 թ.



«Մեկ երեխա-մեկ համակարգիչ» ծրագիր

1. Ծրագրի նպատակը	Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման միջոցով կրթության որակի, մատչելիության և արդիականության բարձրացման նպատակի համար, ՀՀ կառավարությունը 2015 թվականի ապրիլի 9-ի N 15 արձանագրային որոշմամբ հաստատել է «Առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու» Մեկ երեխա-մեկ համակարգիչ» փուլային ծրագիրը և փորձնական փուլի նկարագրիչը:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի նպատակն է առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» փուլային ծրագրի փորձնական փուլի ընթացքում, ՀՀ վարչապետի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տարրական դասարանների աշակերտներին և դասվարներին անհատույց պլանշետների տրամադրումը:
3. Բարեգործը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
4. Ծրագիրը կատարողը	Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ (ք. Երևան, Ռոստոմի 29/164, ՀՎՀՀ 02537635)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ (ք. Երևան, Ռոստոմի 29/164, ՀՎՀՀ 02537635) Վայոց ձորի մարզ, պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ կրթության բնագավառ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2018 թվականի N Մ-450-Ա
քաղ. երևան

«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒ-
ՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2018 թվականի հունիսի 5-ի N 1/14-2/10006-18, Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 4-ի N 3/3-8/29477-18 և
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի հունիսի 1-ի
N 02/14/56497-18 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ.
Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 83,600,000 դրամ ընդհանուր արժու-
ղությամբ «Գյումրիում սոցիալական բնակարանների կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում
մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի
պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-
կան ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի
հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված
ծրագրի շրջանակներում կատարվող աշխատանքների կողմից, ինչպես նաև կազմակերպությանը
մատակարարված ապրանքների ու ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից
հետո մեկամսյա ժամկետում՝ ամբողջական տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղա-
քապետին:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի
գործադիր տնօրեն Հ. Ստեփանյանի կողմից


«18» մայիսի 2018 թ.

«Գյումրիում սոցիալական բնակարանների կառուցում» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Գյումրիում տնակային ավանների բնակիչների բնակարանային պայմանների բարե- լավում՝ գոյություն ունեցող կիսակառույց շենքի վերակառուցում տասնմեկ բնակարանով բնակելի շենքի:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ավելակվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, սուր- բերի, պարտավոր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման բնկերակցություն (ARDA)» շահույթ չհետա- պնդող կազմակերպություն՝ 74,000,000 դրամ, Գյումրու քաղաքապետարան 9,600,000 դրամ:
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագրավորը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրի քաղաքի Մ. Խորենացի 46/1՝ քաղաքաշինության բնագրավոր:
6.	Ծրագրի բյուջեն	83,600,000 դրամ, հարկային արտոնություն է ակնկալվում 74,000,000 դրամից:

ԿՔ. 2/2

7.	Բարեգործություն ստացողը	Գյումրու ժամանակավոր տնակներում ապրող հաշմանդամ, ծեր, միայնակ և մանկատների շրջանավարտ ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվելու է Գյումրու քաղաքապետարանի տրամադրած ցուցակների հիման վրա Գյումրու քաղաքապետարանի և «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ ստեղծված հանձնախմբի ուսումնասիրությանն ենթարկվելու արդյունքում: Բնակարանները շահառուներին հանձնվում են բնակության իրավունքով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 թվականի մայիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ գոյություն ունեցող կիսակառույցի (առկա են 1-ին և 2-րդ հարկի պատերը և 1-ին հարկի ծածկը) վրա ավելացվելու է 3-րդ հարկ: Նախատեսվում է իրականացնել 2018 թվականի մայիսի 1-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը՝ 83,600,000 դրամ:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 29,260,000 դրամ: Շինարարական նյութերի ձեռքբերում՝ 54,340,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարան, որն այս նպատակով տրամադրել է սեփականության իրավունքով համայնքին պատկանող կիսակառույց շենք, ինչպես նաև իրականացնելու է նախագծանախահաշվային ու փորձաքննության աշխատանքները և արտաքին կոմունիկացիաները:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2018 թվականի N Մ-451-Ա
քաղ. երևան**

**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՅ ԻՐԱՎԱ-
ՆԱՅՈՂ «ԿԱԹԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՏԵՐԻ
ՍՏԵՂԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիսի 1-ի N 1/14-2/9805-18, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 4-ի N 3/3-8/29632-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի հունիսի 1-ի N 02/14/56498-18 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2018 թվականի հունիսի 5-ի N 101/104.3.2/3172-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 12,528,345 դրամ ընդհանուր արժույթյամբ «Կաթի հավաքման և պահպանման կետերի ստեղծում» ծրագիրը (կցվում է):

2. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ նախորդ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված «ԱՌԴԱ» բարեգործական ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի
գործադիր տնօրեն՝ Ստեփանյանի կողմից
2018 թ. մայիսի 17-ի



«Կաթի հավաքման և պահպանման կետերի ստեղծում» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարինջ և Մարց համայնքներում կաթի հավաքման ու պահպանման կետերի ստեղծում:
2.	Ծրագրի բարեգործական նպատակը	Ավելակվում է բարեգործի իրախառու և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման ընկերակցություն (ARDA)» շահույթ չհետապնդող կազմակերպություն (Կաթիֆորմիա 91107, Փաստիճա, Ֆուլբի, բովկար 2650):
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ.Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ՝ գյուղատնտեսության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	12,528,345 դրամ, արտնք ԱԱՀ-ի:
7.	Բարեգործություն ստացողը	Լոռու մարզի Քարինջ համայնքի 96 և Մարց համայնքի 84 ընտանիքներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 թվականի հունիսի 1-ից մինչև օգոստոսի 30-ը:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Կաթի հավաքման ու պահպանման կետերի ստեղծման համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարինջ և Մարց համայնքներում գոյություն ունեցող համայնքապետական կիսավեր երկու շինությունների՝ սանիտարական նորմերին համապատասխան, վերանորոգում: Քարինջ համայնքում կիսավեր շունտի վերանորոգման ծախսերը կկազմեն՝ 4,109,297 դրամ, իսկ Մարց համայնքում՝ 8,419,048 դրամ, որից հետո «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի (ՀՀ, քաղ. Երևան, Կարապետ ՌԻչկեցու 14) կողմից կտեղադրվեն երկուական (1,020 (ամառային սեզոնի համար) և 400 (ձմեռային սեզոնի համար) լիտրանոց) կաթի սառեցման սարքավորումներ: Նշված աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2018 թվականի հունիսի 1-ից մինչև օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում:
10. Ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Կիսավեր շունտի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 4,207,785 դրամ, առանց ԱԱՀ-ի: Շինարարական կյութերի ձեռքբերում՝ 8,320,560 դրամ, առանց ԱԱՀ-ի:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով:



8/8. 17



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2018 թվականի N Մ-452-Ա
քաղ. երևան**

**«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՐՄԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիսի 1-ի N 1/14-2/9803-18, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 4-ի N 3/3-8/29613-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մայիսի 31-ի N 02/14/56391-18, Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մայիսի 31-ի N ԱՊ/ԱնԲ-2-1/5469-18 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2018 թվականի մայիսի 30-ի N 101/104.3.2/3086-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հուլիսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 5,308,380 դրամ ընդհանուր արժեքով «Սոցիալական աջակցության կենտրոնի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոտեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2018 թվականի ապրիլի 18-ին կնքված՝ N 180418 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 5,308,380 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Ջամբազյանի կողմից
«14»-ը մայիսի 2018թ.

**«Սոցիալական աջակցության կենտրոնի բարեկարգում»
Ծ Ր Ա Չ Ի Ր**

1.	Օրագրի նպատակը	Լոռու մարզի Թումանյան համայնքի 3-րդ թաղամաս, 15-րդ փողոց, թիվ 9 շենք հասցեում գտնվող «Սոցիալական աջակցության կենտրոն» -ի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում
2.	Օրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների զեղծվ արտոնություններից:
3.	Բարեգործը	Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (Շվեյցարիա, Բայնվիլ ամ Զեն, Ֆելդշտրասսե 9)
4.	Օրագրի կատարողը	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս)
5.	Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք՝ սոցիալական բնագավառ
6.	Օրագրի բյուջեն	5,308,380 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Լոռու մարզի Թումանյան համայնքի «Սոցիալական աջակցության կենտրոն»
8.	Օրագրի իրականացման տևողությունը	Օրագիրը նախատեսվում է իրականացնել 2018 թվականի ապրիլի 18-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2018 թվականի ապրիլի 18-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում իրականացնել «Սոցիալական աջակցության կենտրոն» -ի տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 5,308,380 դրամ ընդհանուր արժեքով:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոտեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Սոցիալական աջակցության կենտրոն» -ի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացման պայմանագիր, որի արժեքը կազմում է 5,308,380 դրամ:
11.	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի մարզպետարան
13.	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերանայությունների և փոփոխությունների նկարագրություն	Հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով:

Կազմեց՝ «Դիակոնիա» ԲԻ-ի փաստաբան-իրավախորհրդատու Արարատ Գրիգորյանը
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)



14.7/18



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2018 թվականի N Մ-453-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՆՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N 01.1/14-2/8487-18, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 5-ի N 3/3-8/30317-18 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N Ն2/22.2/5426-18 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Direct Relief» միջազգային կազմակերպության կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (11 տեղ, 4,346 կգ ընդհանուր քաշով, 290,554.94 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 37,334.14 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄԿ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն, ուղարկել՝ Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:


ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՈՇՄ ՄԵՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ**

ՀԱՇՎ 120

Հ/Հ	Դոնոր	Նկարագրություն	Ստացող	Կոդ	Արև	Քաշ (lbs)	Արժեք (ԱՄՆ դոլար)
1	Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International)	Դեղեր	Այրումյան Լ. - ՀՀ առողջապահության նախարարություն	Air 120-01	4	3,322.00	154,723.33
2	Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International)	Դեղեր	Այրումյան Լ. - ՀՀ առողջապահության նախարարություն	Air 120-02 D	1	1,010.00	87,420.68
3	Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International)	Դեղեր	Ավետիսյան Կ. - ՀՀ-ում ԱՀ ներկայացուցչություն	NKR Air 120-03	1	1,424.00	5,637.30
4	Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International)	Դեղեր	Մինասյան Մ. - «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն	Air 120-04	1	437.00	10,086.50
5	Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International)	Դեղեր	Աղաջանով Ե. - «ՀՀ-ում ԱՀ ներկայացուցչություն»	Air 120-05	1	678.00	16,531.00
6	Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International)	Դեղեր	Տարազյան Կ. - ՀՀԸՄ Բլուրյա Նազարյան Բժշկական կենտրոն	Air 120-06			6,029.60
7	Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International)	Բժշկական պարագաներ	Ղազարյան Ս. - «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ	Air 120-07	1	678.00	1,480.23
8	Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International)	Բժշկական պարագաներ	Ավետիսյան Կ. - ՀՀ-ում ԱՀ ներկայացուցչություն	NKR Air 120-08			773.36
9	Հայաստան - Արցախ հիմնադրամ (Direct Relief International)	Դեղեր	Ղազարյան Ս. - «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ	Air 120-09	2	2,034.00	7,872.94
Ընդամենը							290,554.94
Փոխադրման օգնություն							37,334.14
Ընդամենը							327,889.08





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2018 թվականի N Մ-454-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 22-ի N 1/14-2/9115-18, Հայաստանի Հանրապետության կառավարության առողջապահության եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 5-ի N 3/3-8/30326-18 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մայիսի 23-ի N Ն.2/22.2/5936-18 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (7 տեղ (361 արկղ), 1,540 կգ ընդհանուր քաշով, 695,821.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 17,222.70 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄԿ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առողջապահության եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԿԱԾ




Ա. ՏԵՐ-ՄԻՄՆՅԱՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐԴԵՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՁԱՆԿ**

ՀԱՆՈՒՄ

Հ/Հ	ԴՈՒՐ	Նկարագրություն	Ստացող	Կոդ	Արկղ	Քաշ (կգ)	Արժեք (ԱՄՆ դոլար)
1	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղ Լատանապրոլ	Այբուրյան Լևոն - ՀՀ առողջապահության նախարարություն	Air 121-01	10	38	18,532.20
2	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղ Լատանապրոլ	Այբուրյան Կարեն - ՀՀ-ում ԱՀ ներկայացուցչություն	NKR Air 121-02	7	26	13,507.20
3	Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares)	Դեղ Լատանապրոլ	Եղիազարյան Նունե - Հայկական ավերարկության նախագիծ	Air 121-03	344	1,343	663,782.40
Ընդամենը							695,821.80
Փոխադրման ծախսեր							17,222.70
Ընդամենը							713,044.50



Ա. 7/10.4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2018 թվականի N Մ-455-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 5)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 30-ի N 1/14-2/9625-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 5-ի N 3/3-8/29872-18 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մայիսի 24-ի N Ն2/22.1/6023-18 միջնորդագիրը, որոշում է.

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ԱՄՆ-ի «Մաքս» հիմնադրամի միջոցով, քրոնիկ միկոլեյկոզ հիվանդությամբ տառապող հիվանդներին անհատույց տրամադրելու նպատակով, ուղարկված դեղերի (9 տեղ, 980 կգ ընդհանուր քաշով, 6,526,357.08 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄԿ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ.Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2018 թվականի N Մ-456-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒՄԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիսի 5-ի N 1/14-2/9996-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 4-ի N 3/3-8/29472-18 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2018 թվականի հունիսի 1-ի N 1/06/700-18 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից, որպես օժանդակություն՝ մասսայական ֆուտբոլը զարգացնելու նպատակով, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված գնդակների և մարզաշապիկների (26 տեղ, 245 կգ ընդհանուր քաշով, 3,646.90 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2018 թվականի N Մ-457-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2018 թվականի հունիսի 5-ի N 01.1/14-2/10003-18 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 6-ի N 3/3-
8/30315-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական
անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությու-
նում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016
թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1073-Ա
որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում՝

1) ֆիթնես ցուցանիշների բազմաֆունկցիոնալ չափիչ հավաքածու՝ մեկ տեղ, 9.5 կգ
ընդհանուր քաշով, 5,500 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ
փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ.

2) մարզագույք՝ 7 տեղ, 23 կգ ընդհանուր քաշով, 1,404.17 եվրոյին համարժեք դրամ
ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ.

3) մարզագույք՝ մեկ տեղ, 165 կգ ընդհանուր քաշով, 952 ԱՄՆ-ի դոլարին համարժեք
դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 80 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան»
ՄՎ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2018 թվականի N Մ-458-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2018 թվականի հունիսի 7-ի N 01.1/14-2/10230-18 և Հայաստանի Հանրապետության կառա-վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 6-ի N 3/3-8/30322-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից առցանց խանութից ձեռք բերված ապրանքները (13 տեղ, 57.83 կգ ընդհանուր քաշով, 2,995.06 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 527.29 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնո-լոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվա-կանի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա, դեկտեմբերի 22-ի N Մ-1157-Ա և 2018 թվականի մարտի 7-ի N Մ-135-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


ՏԵՂԵԿԱԼՔ					ՄԱՎԱՆՈՒՄ	
ՏԵՂԵԿԱԼՔ	Չ/Մ	ՔԱՆԱԿ	ՄԻԱԿՈՐԻ ԱՐԺՔԻ ՄԱՆ ԲՈՒՄ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ ՄԱՆ ԲՈՒՄ		
Թվային օստիլոգրաֆ, չափիչ սարք/Rigol DS1054Z Digital Oscilloscopes - Bandwidth: 50 Mhz, Channels: 4	հատ	2	349.00	698.00		
Ձողման սարք/Weller WES51 Analog Soldering Station	հատ	8	91.68	733.44		
Լարում, դիսկոնալայն, հոսանքի թվային չափիչ սարք/Neotek Pocket Digital Multimeter 8233D PRO 2000 Counts Auto Ranging Digital Multimeters Digital Multi Tester-DC Current Resistance Diodes Transistor	հատ	8	19.95	159.6		
Ձողման սարքի հախար լսարկ/Հակո 599B-02 Wire-type soldering iron tip cleaner	հատ	8	9.38	75.04		
Խոշորացույց/DREAME 30X 60X LED Lighted Illuminated Jewelers Eye Loupe Jewelry Magnifier for Gems Jewelry Rocks Stamps Coins Watches	հատ	4	10.98	43.92		
Hobbies Antiques Models Photos	հատ	2	19.45	38.90		
Ձողման/Chemtronics Desoldering Braid, Chem-Wik, Rosin, 10-50L 0.10", 50ft.	հատ	2	19.45	38.90		
Միացման լարեր/Striveday™Flexible Silicone Wire 24awg Electric wire 24 gauge Coper Hook Up Wire 300V Cables electronic stranded wire cable electronics DIY BOX-1	հատ	1	15.99	15.99		
Թվային կարգավորման սխեման թվային/KORAD KD3005D - Precision Variable Adjustable 30V, 5A DC Linear Power Supply Digital Regulated Lab Grade	հատ	1	85.00	85.00		
Խառցողական տպաստվող/Gikfun DIY SMD SMT Welding Practice Soldering Skill Training Board Ek7028	հատ	16	8.26	132.16		
Ձողման սարքի հախար նախատեսված միացող/SRA Soldering Products PEN_RMA #99-20 Rosin RMA Soldering Flux Pen - Refillable	հատ	1	9.03	9.03		
Դիսկոնալայնների փաթեթ/AideTek 0603 Size, surface monnt resistor SMD SMT 144 Values, 100pc/Value 1% Sample Resistor Kit Distributed in Box-all Enclosure E96 Serial 0ohm to 1m	հատ	1	99.99	99.99		

41. 7/10.1

Դիմադրությունների փաթեթ /AideTek SMD 0603 capacitor kits 100 Values, 50pc/value 1% Sample Capacitor Kit Distributed in Box-all Enclosure Designer Kit NPO Y5v X7r free Tweezers 10uf 4.7uf	հատ	1	199.00	199.00
Մակերևույթը մաքրելու համար դանակ/X-ACTO #1 Knife, Z Series With Safety Cap	հատ	1	5.97	5.97
Ցածրացնող լարման փոխակերպիչ/Simran AC-500 Step Up/Down Voltage Converter Transformer 110V/220V - 500 Watts	հատ	2	31.14	62.28
Երկարացման լար/AmazonBasics 6-Outlet Surge Protector Power Strip 2-Pack, 200 Joule - Black	հատ	2	11.49	22.98
պինցետ/RYMALL 10 pcs Precision ESD Anti-Static Stainless Steel Tweezers Set Kit for Electronics, Jewelry-Making, Laboratory Work, Hobbies in 10 Sizes	հատ	6	12.99	77.94
Գնդակի սպասարկման արտեսուարներ/ Franklin Sports Ball Maintenance Kit: Pump, Needles & Pressure Gauge, FRANKLIN SPORTS	Կոմպլեկտ	2	5.99	11.98
Գնդակ/Nike La Liga Strike Ball 2017/18 (White/Turquoise)	հատ	6	49.99	299.94
Գնդակ/Under Armour 495 Indoor/Outdoor Basketball, Official/Size 7	հատ	6	29.83	178.98
Ցանց/ Spalding 413-625 Official NBA On-Court A Net, White	հատ	3	12.99	38.97
Պայուսակ/ BSN Heavy-Duty Mesh Equipment Bag	հատ	1	5.95	5.95
Ընդամենը				2,995.06


Միմոնյան Կրթական Հիմնադրամի

Գլխավոր տնօրեն՝



Աստի Գալստյան
Մարի Լու Փափազյան

4.7/10.12





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2018 թվականի N Մ - 459 -Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N3)
(«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիսի 11-ի N 01.1/14-2/10404-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 6-ի N 3/3-8/30310-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ապրանքները («ԱՄՈՒՐ» մուգ շագանակագույն տախտակ, 26,049.87 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,777,840 դրամ «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բելրուսի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգում և հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված (2018 թվականի մարտի 16-ի N Մ-162-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
8 հունիսի 2018 թվականի N Մ - 460 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ
ՇՐՋԱՆԻ ԹԱԼԻՇ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵՋԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիսի 5-ի N 01.1/14-2/9994-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի հունիսի 6-ի N 02/14/56791-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 4-ի N 3/3-8/29476-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 6,585,100 դրամ ընդհանուր արժողությամբ «Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի մանկապարտեզի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2018 թվականի մայիսի 25-ին կնքված N ԱՀ-Կ-10/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստման, գնման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 6,585,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել արդյունքների տեսակետներ:


4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան
«31» մայիսի 2018թ.



«Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի մանկապարտեզի կահավորում»


ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակը	Կահավորել Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի մանկապարտեզը
1. Ծրագրի նպատակը	Կահավորել Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի մանկապարտեզը
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ԳՎՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, կրթության բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 6.585.100,00 դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի բնակիչները
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ մայիսի 25-ից մինչև 2018թ. օգոստոսի 31-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2018թ մայիսի 25-ից մինչև 2018թ. օգոստոսի 31-ը կահավորել վերոնշյալ մանկապարտեզը 6.585.100,00 դրամի սահմաններում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի թիվ 1 հավելվածի ցանկի համաձայն գույքի պատրաստում, զնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 6.585.100,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կրթության և գիտության նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



Վ. Զ. Դ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
8 հունիսի 2018 թվականի N Մ - 461 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՈՒՄ
ՇՐՋԱՆԻ ԹԱԼԻՇ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիսի 6-ի N 01.1/14-2/10097-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի հունիսի 7-ի N 02/14/56977-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 4-ի N 3/3-8/29675-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 16,754,900 դրամ ընդհանուր արժողությամբ «Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի դպրոցի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2018 թվականի մայիսի 25-ին կնքված N ԱՀ-Կ-11/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստման, գնման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 16,754,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության տնտեսական առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական

հիմնադրամի գործադիր տնօրեն
Սրբ. Կարամյան



30 մայիսի 2018թ.

«Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի դպրոցի կահավորում»


ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակը	Կահավորել Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի դպրոցը
1. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային պոտենցիալից
2. Բարեգործը	Սմիատ բարեգործություն
3. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. երևան, կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, կրթության բնագավառ
5. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 16.754.900,00 դրամ:
6. Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի բնակիչները
7. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ մայիսի 25-ից մինչև 2018թ. օգոստոսի 31-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2018թ մայիսի 25-ից մինչև 2018թ. օգոստոսի 31-ը կահավորել վերոնշյալ դպրոցը 16.754.900,00 դրամի սահմաններում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի թիվ 1 հավելվածի ցանկի համաձայն գույքի պատրաստում, զնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 16.754.900,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կրթության և գիտության նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



Ա. Դ. Դ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
8 հունիսի 2018 թվականի N Մ - 462 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՑԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ ՈՒ
ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԻԱԺՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱԴԱՐՏԵԶ-
ՆԵՐՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի հունիսի 11-ի N 01.1/14-2/ 1043118, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի հունիսի 6-ի N 02/14/ 56886-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի հունիսի 6-ի N 3/3-8/30323-18 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 6,718,236 դրամ ընդհանուր արժողությամբ «Արցախի Հանրապետության Ասկերանի ու Շուշիի շրջանների բուժմիավորումներում և մանկապարտեզներում արևային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02617144) 2018 թվականի մայիսի 14-ին կնքված N ԱՀ/ՋՏ-02/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 20 հատ ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում՝ 6,718,236 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

